

մէկը: Յայտնութիւնները յայտնութիւնը խորհնացու «չորրորդ գիրքն» է, որը իբր յայտնաբերուել է դարձեալ Թղթեայ ձեռագրում: Դժբախտաբար յայտնաբերողին յայտնի չի եղել այս ձեռագրին նուիրուած օտարալեզու գրականութիւնը: Յայտնի լինելու դէպքում նա կ'իմանար, որ իր կողմից որպէս չորրորդ գրքի ապացոյցներ ներկայացուող քաղուածքները պատկանում են Հիպոդիտոսի ժամանակագրութեան Ալեքսանդրեան խմբագրութեանը, որն ստեղծուել է խորհնացուց յետոյ եւ որի յունարէն բնագրում նոյնպէս կայ այն, ինչ Մատենադանը «գտել» է «չորրորդ գրքում»<sup>32</sup>:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Մաթեոսեան Ա., Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» չորրորդ գիրքը, Ե., 1995, էջ 205: Այսուհետեւ՝ Մաթեոսեան:
- 2 Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, Ե., 1974, էջ 127 եւ Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 1, Ե., 1974, էջ 127 եւ Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 1, Ե., 1990, էջ 70:
- 3 Abgarian G., *The Matenadaran in Erevan*: -The Book collector, London, 1960, Summer, P. 149.
- 4 Մանր ժամանակագրութիւններ, կազմեց Վ. Ա. Յակոբեանը, Հ. 2. Ե., 1956, էջ Ծ-23: Հմմտ. Թղթեայ ձեռագիր, էջ 158բ-164ա:
- 5 Թղթեայ ձեռագիր, էջ 165ա:
- 6 Նոյն տեղում, էջ 49բ: Ամբողջ «Կայսերքը» ձեռագրում գրադէցնում է 49բ-71բ էջերը: Այն հրատարակել է Ա. Արքայանեանը 1944 թ. Անանիա Օհրակացու «Մատենագրութիւնում» էջ 378-399:
- 7 Նկատի ունենք թղթեայ ձեռագրում գտնուող հատկապէս 54ա-54բ էջերը, որոնք Օհրակացու «Մատենագրութիւնում» համապատասխանում են 373-374 էջերին:

- 8 Մաթեոսեան, էջ 220:
- 9 Մատթէոս Ուոհայեցի, *Ժամանակագրութիւն*, Վաղարշապատ, 1898, էջ 217, 220:
- 10 Մաթեոսեան, էջ 207:
- 11 Մատեան գիտութեան եւ հասարակական գիտությունների համալսարանի, Նմանահամություն, Ե., 1995, էջ 9:
- 12 Թղթեայ ձեռագիր, էջ 49բ:
- 13 Թղթեայ ձեռագիր, էջ 162ա:
- 14 Մաթեոսեան, էջ 211:
- 15 Սամուէլ Անեցի, *Հասարակաց ի գրոց պատմագրաց*, Վաղարշապատ, 1883, էջ 71:
- 16 Թղթեայ ձեռագիր, էջ 161բ:
- 17 Մաթեոսեան, էջ 211:
- 18 Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրութեամբ Գ. Վ. Արքայանեանի, Ե., 1979, էջ 55:
- 19 Մաթեոսեան, էջ 118:
- 20 Թղթեայ ձեռագիր, էջ 156ա:
- 21 Արքայանեան Ա. *Անանիա Օհրակացու մատենագրութիւնը*, Ե., 1944, էջ 363:
- 22 Նոյն տեղում, էջ 364:
- 23 Hippolytus werke, 4Bd, Die Chronik. Hergestellt von Adolf Barer... Nebst zin Beitrag von J. Markwart, Leipzig, 1929, S. 486, 494.
- 24 Թղթեայ ձեռագիր, էջ 162բ: Յովհաննէս Աւագերեցը Գորգի աղիսակն արտագրելիս եւ իր ժամանակագրութեան մէջ ներմուծելիս բաց է թողել «ԼԱ ամէն Խորովոս» բառերը, որոնք երևում են նոյն ձեռագրի 190բ էջում ընթերցանութեամբ տեքստի տակից: Այս էջը կրկնագիր է:
- 25 Նոյն տեղում, էջ 158բ:
- 26 Նոյն տեղում, էջ 159ա:
- 27 Մաթեոսեան, էջ 220:
- 28 Նոյն տեղում, էջ 207:
- 29 Նոյն տեղում, էջ 206:
- 30 Թղթեայ ձեռագիր, էջ 50ա:
- 31 Նոյն տեղում, էջ 158:
- 32 Հիպոդիտոսի Ալեքսանդրեան խմբագրութիւնը տե՛ս մեր սոյն յօդուածի 24-րդ ծանօթագրութիւնում: Նրա եւ «չորրորդ գրքի» յարաբերութիւններին անդրադարձել ենք «Բազմավէպում» տպագրուող առանձին յօդուածում:

ԿԱՐԾԵՑԵԱԼ ՎԵՐԾԱՆՈՒՄՆԵՐ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ  
«ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ ԲՆԱԳՐՈՒՄ

Գուրգէն Սանուկեան

Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկում կան բառակապակցութիւններ, նախադասութիւններ, առանձին անուանումներ, որոնք կարօտ են մեկնաբանման, որով զբաղուել են միջնադարում, այնուհետեւ Յակոբ Նալեանը<sup>1</sup> եւ Գաբրիէլ Աւետիքեանը<sup>2</sup> գրել են մեկնական աշխատութիւններ, որոշ վերծանումներ առաջարկել են եւ այլք: Հմուտ բանասէրներ Պ. Խաչատրեանի եւ Ա. Ղազինեանի աշխատասիրութեամբ բազմաթիւ ձեռագրերի հիման վրայ հրատարակուել է «Մատեան ողբերգութեան» երկի գիտահամեմատական բնագիրը՝ ծաւալուն առաջաբանով, տարբերակներով,<sup>3</sup> որոնցում ոչ միայն տրուում են բնագրի հետ առնչուող բացատրութիւններ, այլեւ ի մի են բերուում մինչ այդ արուած վերծանումները: Ամէն ինչ մինչեւ օրս արուել է Հանճարեղ բանաստեղծին եւ նրա Հանրահռչակ երկին վայել մակարդակով ու նուիրումով:

Սակայն այն, ինչ կատարուում է այժմ, վեր է երեսակայութիւնից, գրեթէ իմաստազուրկ է եւ ոչ թէ լոյս է սփռում «Մատեան»-ի վրայ, այլ մթագնում ու աղաւաղում է այն:

Այսպէս, Հ. Միրզոյեանն իր խմբագրած «Բանբեր Երեւանի Համալսարանի» հանդէսի «Նարեկի ծածկագրութիւնների վերծանութեան փորձ» յօդուածում (2002, թիւ 3, էջ 67-84) ներկայացրել է «Մատեան»-ում հիմնականում տասներեք եւ մի քանի այլ վերծանումներ, որոնք վերաբերում են Նարեկացու ծննդեան թուականին, սոյն երկի որոշ գլուխներին

գրուելու ժամանակին, բանաստեղծի հօր՝ Խոսրով Անձեւացու ծննդեան եւ մահուան թուականներին, նոյնիսկ տարուայ եղանակներին:

Ըստ Հ. Միրզոյեանի՝ սոյն երկում կան բազմաթիւ ծածկագրութիւններ, որոնցից միայն մի մասն է առայժմ վերծանել:

Այո, որքան էլ ցաւալի է, պէտք է ասել, որ այստեղ եղած բոլոր վերծանումները սխալ են եւ գիտական հիմնաւորումից զուրկ: Դրանք պարզապէս պատահական համընկումներ են, բնագրի թիւրմբումնան արդիւնք են եւ գրաբարի վատ իմացութեան հետեւանք:

Նա իր «վերծանումները» ներկայացրել է, այսպէս կոչուած, հերթական փաստերի միջոցով, ուստի եւ մենք էլ սկսենք «փաստերի» նոյնաշար հերքմամբ:

1) Փաստ առաջինի հերքումը

Մատթէոսի Աւետարանի 18-րդ գլխի 21-22 տողերում մարդկային անյիշաչարութեան մասին կայ այսպիսի փաստարկ: Պետրոս առաքեալը դիմում է Քրիստոսին եւ ասում. «Տէ՛ր, քանի՞ անգամ, եթէ եղբայրս իմ դէմ մեղանչի, պէտք է ներեմ նրան, մինչեւ եօթն անգամ»: Յիսուսը նրան ասում է. «Քեզ չեմ ասում, թէ՛ մինչեւ եօթն անգամ, այլ՝ մինչեւ եօթնասուն անգամ եթէ»: Ահա այդ նկատի ունենալով՝ Նարեկացին գրել է (Բան ԺԵ, տող 88-92)<sup>4</sup>.

Եթէ մարդկան կարգեցր զայս կէտ սահմանի մեծի պայմանի ի բարեվիճակդ քո կանոնաց՝

Ոչ փոխատրել անդրեմ չարի չար,  
Այլ եւթանասնիցս եւթն թողույ  
Անդուստ ի յաւուր զիրաքանչիւր մեղա-  
նաց զպարտու...

Գ. Խաչատուրեանը թարգմանել է  
(էջ 35)<sup>5</sup>.

Քու բարեկտակ կանոններու մէջ  
Մարդոց համար դուն դրիր մեծ պայման՝  
Չարը չարով չփոխարինել, այլ մէկ օ-  
րուան մէջ

Եօթանասուն հեղ եօթն անգամ գոր-  
ծուած մեղքերուն ներել:

Վ. Գեորգեանը եւս ճիշտ է Հաս-  
կացել Նարեկացուն (էջ 89)<sup>6</sup>.

Քո բարեկտակ կանոնների մէջ

Դու մարդկանց համար մեծագոյն օրէնքն  
այս սահմանեցիր՝

Չարը չարութեամբ չփոխարինել,

Այլ մի օրուայ մէջ ներել եօթն անգամ

Եօթանասուն հեղ գործած մեղքերը:

Այսքանից յետոյ, թուում է, ամէն ինչ  
ասուած է պարզ ու Հասկանալի, եւ ոչ  
մի ծածկազրուած այստեղ չկայ եւ լինել  
չի կարող: Սակայն Հ.Մ.-ը այլ կերպ է  
ըմբռնել: Նա չի Հասկացել, թէ ինչ է  
նշանակում «թողույ... մեղանաց  
զպարտու»: Յիշենք Հանրայայտ Տէրունա-  
կան աղօթքի տողը՝ «Եւ թո՛ղ մեզ զպար-  
տիս մեր», որ նշանակում է՝ ների՛ր մեր  
մեղքերը, այսինքն՝ թողույ նշանակում է  
ներել, իսկ «մեղանաց զպարտու» կապակ-  
ցութիւնում մեղք անեղական գոյականի  
սեռական հոլովն է, որը նոյն իմաստն է  
արտայայտում, ինչ զպարտու՝ պարտք՝ մեղք  
նշանակող բառի յոգնակի Հայցականը.  
Երկուսը միասին սաստկացնում են մեղք  
Հասկացութիւնը: Պարզապէս Հ. Միրզո-  
յեանը սխալուել է՝ կարծելով, թէ «եւթա-  
նասնիցս եւթն թողույ» նշանակում է 70-7:  
Այստեղ եւթանասնիցս բացառական հոլո-

վով է, որ նրանից եօթը հանենք, այլա-  
պէս կը լինէր «յեթանասնիցս»: Եւ այս-  
պէս, գրաբարի քերականութեան թերիմա-  
ցութեան Հետեւանքով ստեղծում է իրա-  
կանութեանը Համապատասխանող մի  
վերծանում՝ 70-7=63: Այնուհետեւ,  
չըմբռնելով «անդուստ ի յաւուր զիրաքան-  
չիւր մեղանաց զպարտու» արտայայտու-  
թեան բուն իմաստը, խօսում է միջնադա-  
րի մարդու Համար մահացու եօթ մեղքե-  
րի մասին, յետոյ, չգիտես ինչու, իր  
ստացած 63-ից Հանում է այդ 7-ը, ստաց-  
ւում է 56: Եւ եզրակացնում է, որ սա  
«այդ գլուխը գրելիս Նարեկացու տարիքն է,  
այսինքն՝ լրացել էր 55 տարին, եւ թեւակոխել է  
56-ի մէջ»: Նոյնիսկ նշում է՝ Մատեանը  
սկսել է գրել հնձի ժամանակ, իսկ ինքը  
ծնուել է աշնանը, ամենայն Հաւանակա-  
նութեամբ՝ Հոկտեմբեր ամսին, իհարկէ, օ-  
րը, շաբաթը եւ ժամը ճշտել առայժմ  
Հնարաւոր չի եղել: Իսկ ինչի՞ց է իմաց-  
ւում, որ Մատեանը Նարեկացին սկսել է  
գրել Հնձի ժամանակ: Նա մէջբերում է  
Բան Բ, 47-53 տողերը.

Ծնորհեա՛ կատարել ի քոյդ հաճութիւն,  
արհմեալդ կամաց,

Զսկզբնաւորեալ մատեան մաղթանաց  
այսր ողբերգութեան:

Եւ ընդ լալով սերմանել բանիս,

Ի նախընթաց չուս աստիճանաց աթե-  
վանացս պատրաստութեան,

Ի կատարածն ժամանելոյ հաւաքման  
հնձոցն՝

Դարձայց բերկրեցեալ լրութեամբ քաւո-  
թեան՝

Պտղոյն երանութեան որայիցն բարու-  
թեան:

Մինչդեռ այդտեղ ոչ թէ ասուած է,  
որ սկսել է գրել Հնձի ժամանակ, այլ ա-  
ղբերակ է Աստուծոյ, որ նա շնորհ անի ի-  
րեն՝ Հեղինակին, սկսած գործը Հասցնել

աւարտին, այն է՝ արցունքներով սերմա-  
նելով իր խօսքերը՝ Հասնի մինչեւ Հունձք  
Հաւաքելուն, իսկ դա լինելու էր տարի-  
ներ յետոյ: Զարմանալի է, եթէ գրաբար  
բնագիրը Հ.Մ.-ին Հասու չի եղել, գոնէ  
թարգմանութիւնները կարդար:

Մի՞թէ «Ի կատարածն ժամանելոյ  
Հաւաքման Հնձոցն» տողը Հիմք է տալիս  
գրելու. «Ընդգծուած տողում պարզորոշ  
ասուած է, որ Մատեանն սկսել է գրել  
Հնձի ժամանակ» (էջ 69): Գ. Խաչատու-  
րեանն այս տողը թարգմանել է. «Երբ  
ծայրը Հասնիմ Հունձք Հաւաքելու» (էջ  
5):

Վ. Գեորգեանը նոյնպէս թարգմա-  
նել է ճիշտ ու բարձրաճաշակ.

Ծնորհ արա ինձ, որ օրհնեալ կամքիդ  
բարեհաճութեամբ՝

Սկզբնաւորուած աղերսամատեանն

Այս ողբերգութեան հասնի աւարտին:

Եւ մինչ այժմ, երբ ես ոտք եմ դրել այն  
ճանապարհին,

Որը տանում է դէպի պատրաստած օթե-  
ւաններդ,

Արցունքներով եմ խօսքս սերմանում,

Երբ հասնի ժամը հնձի հաւաքման,

Թող որ կատարեալ քաւութեամբ դաւո-  
նամ գոհ ու բերկրալից՝

Ընտիր խրձերի երջանիկ բերքով (էջ 12):

Աւելացնենք նաեւ, որ Նարեկացին  
այստեղ նկատի է ունեցել Սաղմոսաց  
գրքի ձիւն (125) գլխի 5-6 տողերը, որ-  
տեղ ասուած է.

Ովքեր ցանում էին արտասուքով,

Ցնծութեամբ պիտի հնձեն:

Այսքանից յետոյ, կարծում եմ, պարզ  
է, որ Մատեանը Հնձի ժամանակ գրելու  
«վերծանումը» իմաստագուրկ է, իսկ  
նրանից բխող եւ «Բանբեր Համալսարա-

նի» Հանդէսի 69-70 էջերում ներկայա-  
ցուած միւս «վերծանումները» անճշտու-  
թիւններ են:

2) Փաստ երկրորդի հերքումը

Այդ վերաբերում է Բան ԻԶ, Բ  
գրուագի 29-32 տողերի շարադրանքին:  
Դա այն նշանաւոր գլուխն է, որտեղ Հե-  
ղինակը, Հետեւելով ժողովրդական  
լալեաց երգերին, գրում է նոյն ձևով՝ ի  
յանգաւորմամբ: Նարեկացին գրել է.

Այլ յեղանակ ինձ ողբականաց աստուտ  
կնքեցի,

Փոխատրեցի սովին բարբառով կոծ  
կսկծելի

Կարգադրեցի շրջաբերութեամբ ի նոյն  
պայմանի՝

Անհատական թիւ խորհրդական երկեակ  
տասնելի:

Գիտահամեմատական բնագրի (ոչ թէ  
գիտաբնական, ինչպէս կարծել է Հ.Մ.-ը,  
նոյն տեղում, էջ 70) 1019 էջի թիւ 11  
ծանօթագրութիւնում նշուած է, որ Հ. Գ.  
Աւետիքեանը («Նարեկուծ», էջ 123-124,  
ծնթ. 8) Հաւաստիօրէն բացատրել է, որ  
այստեղ երկեակ տասնելի նշանակում է  
20, իսկ դա ի տառի թուանիւն արժէքն է,  
որով, ինչպէս ասուեց, աւարտում են  
ամբողջ ԻԶ (26) գլխի տողերը: Այդ քսա-  
նը՝ երկու տասնեակը, յիշեցնում է տասը  
քանքարի փոխարէն քսանը ձեռք բերե-  
լու մասին առակը (Ղուկ. ԺԹ 12-26,  
Մատթ. ԻԵ 14-30): Բայց քանի որ Հ.Մ.-  
ը վերծանման այլ ուղիներ գիտէ, Համա-  
ձայն չէ ականաւոր նարեկուծ, ճանա-  
չուած գրաբարագէտ Հ. Գ. Աւետիքեանի  
հետ եւ հրամցում է մի տեսակէտ, որտեղ  
անճշտութիւն կայ: Ըստ նրա՝ «անհատական  
թիւ» «երկեակ տասնելի» արտայայտութիւն-  
ները պէտք է հասկանալ «20-ի մէջ եղած  
«կենտ-պարզ» թուերը, որոնք են 1, 3, 5, 7, 11,

13, 17, 19: Դրանց բոլորի գումարը կազմում է 76»: Այնուհետև դրանից հանում է 20-ը (քանքարների քանակը), եւ ստացուում է վերը նշուած 56 թիւը, որը իրեւ թէ նարեկացու տարիքի նշումն է:

Մենք արդէն գիտենք, թէ սկզբում ինչպիսի անճշտութեամբ էր ստացուել 56 թիւը, այստեղ եւս աւելանում է մի նոր անճշտութիւն: Դպրոցական մաթեմատիկայի դասագրքից անգամ յայտնի է, որ պարզ թիւ հշանակում է 1-ից մեծ բնական թիւ, որը, 1-ից եւ իրենից բացի, այլ բաժանարար չունի: Այնտեղ բառացի ասուած է. «Այն բնական թիւը, որն ունի միայն երկու բաժանարար՝ ինքը եւ մէկը, կոչուում է պարզ թիւ»: Ներկայացուած է պարզ թուերի աղիւսակ մինչեւ 997, որն սկսում է ոչ թէ 1-ով, այլ 2-ով: Որից յետոյ գրել են. «Բնական թուերի շարքում կայ մի այնպիսի թիւ, որն ունի միայն մէկ բաժանարար, դա մէկն է: Այդ պատճառով մէկը ո՛չ պարզ է, ո՛չ էլ բազադրեալ: Սա մէկ անգամ եւս հաստատում է, որ մէկը իւրայատուկ թիւ է»:

Պարզ թուերի մասին գիտական հիմնաւորմամբ «Հայկական հանրագիտարանի» 9-րդ հատորի 195 էջում գրուած է. «Պարզ թիւ, 1-ից մեծ բնական թիւ, որը, 1-ից եւ իրենից բացի, այլ բաժանարար չունի. 2, 3, 5, 7, 11, 13 թուերը պարզ են»: Այստեղ եւս պարզ թուերի մէջ չի հաշուարկուած 1-ը: Այնուհետև աւելացուել է. «Պարզ թուերը բնական թուերի բաժանելիութեան տեսութեան հիմնական հասկացութիւններից են. թուաբանութեան հիմնական թէորեմը պնդում է, որ 1-ից մեծ իւրաքանչիւր բնական թիւ միակ ձեւով կարելի է ներկայացնել պարզ արտադրիչների արտադրելի տեսքով ( $24=2 \times 2 \times 2 \times 3$ ,  $15=5 \times 3$  եւ այլն)»: Այս ամէնը եւ շարունակութիւնը շարադրուած են՝ ըստ հաւաստի գիտական

գրականութեան (Виноградов И. М., Основы теории чисел, 8 изд., М., 1972: Трост Ю., Простые числа, пер. с нем, М., 1959):

Ելնելով այստեղից՝ նարեկի բնագրում նշուած 20 թիւը պէտք է ներկայացնել հետեւեալ պարզ արտադրիչների տեսքով՝  $20=5 \times 2 \times 2$ :

Ըստ Հ.Մ.-ի՝ նարեկացին այլ կերպ է վարուել. իրար է գումարել 20-ի մէջ եղած «կենտ-պարզ» թուերը՝ 1, 3, 5, 7, 11, 13, 17, 19 եւ ստացել է 76: Եւ քանի որ 1-ը կենտ է, բայց պարզ թիւ չէ, հետեւաբար Հ.Մ.-ի ասած կենտ-պարզ թուերը պէտք է սկսուեն 3-ից, այս դէպքում արանց գումարը կը լինի 75, ոչ թէ 76, իսկ եթէ 75-ից հանենք 20-ը, ինչպէս վարուել է Հ.Մ.-ը, այդ դէպքում կը ստանանք 55, ոչ թէ 56, որը, ըստ Հ.Մ.-ի, նարեկացու ծածկագրում տարիքն է: Իսկ այսպիսի շտկմամբ արդէն փոյ է գալիս արա «վերծանումը», եւ Հ.Մ.-ի արածը դառնում է սխալ ու անիմաստ:

3) Փաստ երրորդի հերքումը

Նա գրում է, որ Բան Ժե (15) + ԻԶ (26) + ԻԹ (29) թուահամարների գումարը կազմում է 70, «որով նարեկացին, փաստօրէն, հասկացնում է, որ իր տարիքն առաջին անգամ յայտնել է հէնց Ժե թուի 70 թուի խորհրդի միջոցով»: Պէտք է ասենք՝ սա պատահական համընկնում է: Այդ դէպքում մենք էլ կարող ենք ասել Ժե (15) + Ի (20) + Լե (35) = 70: Մի՞թէ սա վերծանում է:

4) Փաստ չորրորդի հերքումը

Նա այն կարծիքն է յայտնել, որ նարեկացին այստեղ (գլուխ ԼԱ, դրուագ Դ, տ. 86-100) ոչ թէ գումարելով-հանելով, այլ բազմապատկմամբ է հաշուել իր տարիքը: Որպէս հիմնական փաստարկ՝

բերուած են հետեւեալ տողերը.

Յանդգնիմ ասել,  
Թե որ կարդայ զքեզ գովեստի, ծանուցեալ զքեզ, թէ իցես,  
Թե եւ եւթամբք իցէ վարակեալ կրկնապատիկ պատժաւորութեամբ,  
Առ այս արիմակ կիրթ ձեռնարկութեամբ, զիա՞րդ ոչ քո իցէ:

90 Յորս է տեսանել ի մէջ արջնատես ազոաւոց՝ սպիտակմիշ երամս աղաւնեաց,

Ի մէջ խրոխտականաց ձիոց անմաքից՝ որոջս հանդարտաբարս,

Ի թիւ շանց գազանականաց՝ գառիմս մուիրելիս,

Հեզութիւն՝ ի խստութեան, կատարելութիւն՝ ի թերութեան,

Խոնարհութիւն՝ յամբարհաւանութեան, ճշմարտութիւն՝ ի ստութեան,

95 Միամտութիւն՝ ի մանկութեան, անբծութիւն՝ յայլամտութեան,

Բարաւորութիւն՝ ի չարութեան, պարկեշտութիւն՝ ի լկտութեան,

Ողորմութիւն՝ յանգթութեան, ապաշաւանք՝ յանցոյցութեան,

Քաղցրութիւն՝ ի բարկութեան, հաշտութիւն՝ ի թշնամութեան,

Անոխութիւն՝ ի խաժանողութեան, քաջալերութիւն՝ ի լկտութեան,

100 Աւրհանութիւն՝ ի անտաճութեան:

Ահա այս մէջբերմանը յաջորդում է մի խառնաշփոթութիւն: «Ինչպէս տեսնում ենք, գրում է նա, վերջին 8 տողում նարեկացին գործածում է հակադիր ու իրարամերժ հասկացութիւնների զոյգեր: Ընդ որում, դրանցից 7-ում առկայ են երկուական զոյգ, իսկ ութերորդում՝ մէկ զոյգ: Միաժամանակ 88-րդ տողում

ասում է, որ «եւթամբք իցէ վարակեալ կրկնապատիկ պատժաւորութեամբ», այսինքն՝ ութը, լինելով զոյգ թիւ, պարունակում է կրկնապատիկ հակադիր հասկացութիւն, որը պէտք է վարակել կամ, որ միեւնոյնն է, բազմապատկել եօթով: Արդէնքում նորից կը ստանանք 56»: Ուզում է ասել՝ կը ստանանք նարեկացու տարիքը նշող թիւը:

Այստեղ ամէն ինչ շուռ է տրուած զլխիվայր՝

1) «Վերծանողը» բոլորովին չի ընկալել նարեկացու գրածը:

2) Գրաբարի թոյլ իմացութեան հետեւանքով չի հասկացել նաեւ, թէ ինչ է նշանակում վարակել:

3) Նա այստեղ եւս այն թիւը կարծիքին է, որ գիտահամեմատական հրատարակութիւնում տողատուումը ճիշտ նարեկացունն է: Մ. Խերանեանը եւ Վ. Գեւորգեանն իրենց թարգմանութիւններում, օրինակ, դրանք ներկայացրել են ոչ թէ 8, այլ 15 տողով, իւրաքանչիւր տողում՝ հակադրուող մէկ զոյգ, եւ նրանք բանաստեղծական տողի կազմութեան եւ ուղիղ զրեւորման տեսակէտից միանգամայն իրաւացի են, այլապէս վերջին տողը դուրս է մնում տաղաչափուած ուղիղից: Անշուշտ, այդպէս էլ պիտի ներկայացուի գրաբար բնագիրը, քանի որ այդ միանգամայն տրամաբանական է: Իսկ այժմ վերադառնանք վարակել բային, որը նա սխալմամբ կարծում է, թէ նշանակում է բազմապատկել: Այս հարցի պատասխանը տալիս են ՆՀԲ-ն (Բ, 790) եւ Առձեռն բառարանը (էջ 752): Այն նշանակում է բռնել, բռնուել, փաթաթել, կապել, կաշկանդել, պաշարել, համակել, վարակել: Նարեկացին այն գործածել է մի բանով բռնուած լինել, վարակուել իմաստներով, որը ճշտօրէն ներկայացրել են թարգմանիչները:

Թ. Գուշակեան<sup>9</sup> (էջ 155).

Թէ իսկ կրկնակի եօթնիցս յանցապարտութեամբ վարակուած ըլլայ...

Գ. Խաչատուրեան (էջ 78).

Թէ իսկ չարաչար եւ եօթնապատիկ յանցապարտութեամբ բռնուած ըլլայ...

Մ. Խերանեան<sup>10</sup> (էջ 138).

Եւ եթէ նոյնիսկ նա եօթնապատիկ անգամ յանցանքով վարակուած լինի...

Վ. Գեւորգեան (էջ 195).

Եթէ մինչեւիսկ կրկնակի եօթն րեւ վարակուած լինի յանցապարտութեամբ...

Այսպիսով, ինչ մնում է այստեղ երկու ինչ-որ ծածկագրութեան, 8 եւ 7 տողերի հաշուարկին եւ նրանց «վարակելուն», ըստ Հ.Մ.-ի՝ բազմապատկելուն, ինչպէս Պարոնեանը կասէր, «Հովուերգութեան ճիւղին կը վերաբերին»:

5) Փաստ հինգերորդի հերքումը

Այստեղ (էջ 71-72) կրկնում է իր նախորդ անճիշտ վերծանումները, մանաւանդ՝ հնձի ժամանակ Մատեանը գրել սկսելը, եւ ահա հասնում է այսպիսի տողերի (Բան ԼԸ, տող 60-61).

Դարձեալ վերստին աշխար կրկին եղկելոյս,<sup>11</sup>

Քանզի գայ հասանէ առ հասկ հասակիս անհնարին բարկութեամբ:

Հ.Մ.-ը այստեղ եւս ծածկագրում է յայտնաբերել: Դրա համար նա հասանէ, հասկ, հասակիս բառերը վանկատում է՝ հա-սա-նէ, հասկ, հա-սա-կիս: Այնուհետեւ գրում է. «Փաստորէն հասկ բառը միավանկ է, իսկ միւս երկուսն ունեն 2-ական ընդհանուր՝ հա, սա վանկ»: Այստեղ, ըստ Հ.Մ.-ի, թաքնուած գաղտնիք կայ: Այն բացայայտելու համար հարկաւոր է տեղադրել դրանց թուային արժէքը՝ հ=70,

ա=1, ս=2000, ա=1, կը ստացուի՝ 71 եւ 2001: Ուշադրութիւն դարձնենք՝ հասկ բառը դուրս է գցում: Այնուհետեւ յանկարծ յայտարարում է, որ՝ «2001-ը պէտք է հասկանալ երկրորդ հազարամեակի 1 թուական կամ պարզապէս՝ 1001 թ.» (էջ 72). (ա՛յ քեզ թուաբանութիւն): Հիմա հերթը 71-ինն է, նախ՝ հանում է 7-ը, մնացածից էլ է հանում 7, ստացւում է 57: Եւ սրան յաջորդում է այնքան ցանկալի եզրակացութիւնը: Ըստ Հ.Մ.-ի՝ աշնանը կամ հոկտեմբերին ծնուած «Նարեկացին 1001 թ. մտել է 57-ամեայ հասակի մէջ, բայց դեռ չի դարձել 57 տարեկան», արդէն «հասցրել է շարադրել 38 գլուխ եւ դեռ պէտք է շարադրի» 57 կամ 55 գլուխ:

Կարդալով այս ամէնը՝ մարդ գարմանքից քարանում է. գուցէ սա երա՞զ է: Լաւ է, որ նա ասում է, թէ Նարեկացին շարադրել է եւ դեռ պիտի շարադրի, այլպէս կարող էր ասել՝ արդէն հաշուարկել է եւ դեռ պիտի հաշուարկի: Կամ մի՞թէ Նարեկացին չգիտէր, որ 2001 թ. ոչ թէ 2-րդ, այլ 3-րդ հազարամեակի սկիզբն էր լինելու:

6) Փաստ վեցերորդի հերքումը

Այժմ էլ պարզւում է, որ Նարեկացին, բան ու գործը թողած, ինչպէս իր Մատեանի բազմաթիւ հատուածներում, այնպէս էլ ԽԳ (43) գլխում դարձեալ ծածկագրմամբ յայտնել է իր տարիքը: Իհարկէ, հայկական միջնադարին, միջնադարեան համեստ հեղինակներին, այդ թուում եւ Գրիգոր Նարեկացուն բոլորովին անտեղեակ մարդուն կը թուայ, որ մեր հանճարեղ բանաստեղծին, կարծէք, բոլորովին չի վերաբերել Մատեանի յիշատակարանում իր ձեռքով համեստորէն գրած հետեւեալ տողը. «Ես՝ Գրիգոր կրօնաւոր քահանայ, յետին քանահիւսաց եւ կրտսեր վարժապետաց» (էջ 642):

Ինչ որ է, շարունակենք ընթանալ այս «վերծանումների» հետքերով:

Ըստ Հ.Մ.-ի՝ Մատեանի ԽԳ (43) գլուխը, որը կազմուած է 49 տողից, ուշագրաւ է յատկապէս 20-ից մինչեւ 45 տողերով (շուրջ 27 տող): Այն, ըստ Հ.Մ.-ի, բաժանուած է 2 մասի՝ 12 տող եւ 15 տող: Առաջին մասի 12 տողերից 11-ն աւարտուած է Է տառով (ի բարկութեան, ի ցասմանէ եւ այլն), իսկ եթէ այդ 11-ը «վարակենք» (սա ըստ Հ.Մ.-ի՝ նշանակում է բազմապատկել) 7-ով, կը ստանանք 77, որից հանելով 20, կը ստանանք 57: Սա քանաստեղծի «տարեքանակն» է: Բայց դեռ եւս պէտք է էլի «վարակել», այսինքն՝ բազմապատկել: Սկզբում ամենայն սկսուածք ունեցող 4 տողին պիտի դուրսուրուի քո դերանուն ունեցող 3 տողերը, թիւը կը դառնայ 7, այս էլ «վարակում ենք» 7-ով, ստացւում է 49: Սա էլ այդ գլխի տողերի թիւն է, այսինքն՝ սա իր արածի «յետագարձ ստուգումն» է:

Դարձեալ ասենք, որ 10-րդ դարում տողատում չի եղել, անգամ բացակայում էր բառանջատումը: Նարեկը գրուել է արձակ շարադրանքով: Հ.Մ.-ի հաշուարկած տողատումը վերջերս կատարել են գիտահամեմատական բնագիր կազմողները: Նրանք կարող էին այլ կերպ տողատել, ինչպէս վարուել է Գ. Խաչատուրեանը (Բուենոս Այրես, 1948, էջ 106): Նա այդ գլուխը ներկայացրել է ոչ թէ 49, այլ 32 տողերով: Այժմ եթէ մէկ ուրիշը բնագիրը վերակազմի, կարող է այլ կերպ տողատել: Միայն այս փաստարկները ցոյց են տալիս, որ Հ.Մ.-ն արել է մի բան, որ անհիմն է ու սխալ:

Այս յօդուածում (էջ 73) նոյնպէս ոչինչ չասող, այո, իրերը կոչենք իրենց անուններով, անմտածելի հաշուարկ է կատարուած. այս անգամ էլ ընդ նախդրի եւ ոչ ժխտականի գործածութեան յար-

մարեցուած հաշուարկով ստացել է իրեն ցանկալի թուեր:

7) Փաստ եօթերորդի հերքումը

Այն, ինչ կատարուել է այստեղ Հ.Մ.-ի կողմից (էջ 73-75), իր նմանը չունեցող, անպատմելի մի աղաւաղում է:

Այժմ ինքներս վերծանենք յօդուածագրի այս խառնաշփոթ վերծանումը: Խօսքը վերաբերում է Բան ԽԶ (46) Բ դրուագին, որը գեղարուեստական առումով մի կատարեալ գլուխգործոց է, սակայն, ցաւօք, ե՛ւ տպագրելիս (1985 թ., էջ 424), ե՛ւ «վերծանելիս» աղաւաղուել է: Այս դրուագում բանաստեղծը գրել է, որ ինքը, նոյնն է թէ՛ իր Մատեանի քնարական հերոսը, այլ խօսքով ասած՝ մարդ արարածը հաստատուած է երկու միաբան ոտքերի վրայ, ունի հրեշտակածեւ կարծէք թուիչքի պատրաստ երկու վերասլաց բազուկներ, որպէսզի հայրենի երկիրը դիտի բարձունքից: Ինչպէս մի կանթեղ՝ մարմնի պերճ աշտանակին գլխի բոլորութիւնն է, որպէսզի միշտ տեսնի Աստուծոն եւ անանցականը իմաստասիրի: Ինքը՝ մարդը ճիւղացուած է բանականութեամբ, որպէսզի իրեն շնորհած բարեմասնութիւններն անկաշկանդ լեզուով պատմի բոլորին: Այս ամենից յետոյ գրում է ձեռքերի մասին. քաղենք Վ. Գեւորգեանի թարգմանութիւնից.

Կրելով գործում, արուեստող ձեռքեր,  
Ծարտար մատներիդ շառաւիղներով,  
Իբրեւ գործակից ամենապարզաւ աջին  
Աստուծոյ,  
Համեցողութեամբ՝ աստուած կոչուեցիր  
(էջ 265):

Խնդրում եմ ուշադրութիւն դարձնել, ձեռքերը նկարագրելուց յետոյ միայն Նարեկացին գրել է.

Բաղադրուեցիր դու երեք Բարիք վաթ-

սուն յօդերով,  
Ի լրում պատշաճ թուի՝ դրանց հետ  
Միատրեղով ճանաչողական հինգ զգա-  
յարան,

Որ անքննադատ չմնայ մտքիդ տեսու-  
թեան կողմից

Քո տեսանելի կազմը միթեղեմ...

Այնուհետև նկարագրում է այդ 360  
յօդերից եւ 5 զգայարաններից կազմուած  
մարմնի մասերը.

Ուր կան անդամներ՝ յաղթ ու զօրաւոր,  
Կան, որ փոքրիկ են, բայց եւ պիտանի,  
Որ կարծրակերտ են, բայց եւ զգայուն,  
Կան որ գողտրիկ են, ընտիր, պատուա-  
կան,

Ինչպէս նաեւ կան, որ կարեւոր են, բայց  
ամօթալի:

Այնուհետև գրում է.

Իսկ մեկնութիւնը դրա կը գտնես  
Նկարուած քո մէջ, ա՛նձն իմ եղկելի,  
Ինչպէս մի անեղծ արձանի վրայ.

Ժամանակի տարրն ու տարին կազմող  
Իրարայաջորդ թիւը օրերի,

Սահմանուած ասես ինչ-որ օրէնքով

Մարմնիդ մասերին համապատասխան,

Պէտք է որ պահուեն անխալ եւ միշտ ա-  
նայլայլելի (էջ 265-266):

Նիւթի շարագրման նման յաջորդա-  
կանութիւն ունեն Գ. Խաչատուրեանի  
կազմած գրաբար բնագիրը եւ արեւմտա-  
հայերէն թարգմանութիւնը (էջ 112-113),  
ինչպէս նաեւ Թ. Գուշակեանի (էջ 210)  
եւ Մ. Խերանեանի (էջ 192-193) թարգմա-  
նութիւնները: Սակայն գիտահամեմատա-  
կան հրատարակութիւնում (էջ 424) պարզա-  
պէս տողերի տպագրական պատահական ե-  
տեսաուշութիւն է ստացուել, որը պարզորոշ ե-  
րեսում է, սակայն, տարուած վերծանմամբ,

Հ.Մ.-ը ոչ միայն չի անատել, այլեւ յենուելով  
տողերի այդ սխալ դասաւորութեան վրայ՝ ամե-  
նայն լրջութեամբ գրել է Մատեանի հետ բոլո-  
րովին կապ չունեցող արտատոց բաներ:

Այդ 424 էջում տողերը հինգական  
հաշուարկմամբ համարակալուած են, սա-  
կայն 25-րդ տողը տեղափոխուել է 30-ից  
յետոյ, որի հետեւանքով 20-ին յաջոր-  
դում է 30-ը, 30-ին՝ 25-ը, ապա նոր՝ 35-  
ը: Ըստ որում, 20 տողահամարում 5 տո-  
ղի փոխարէն կայ 9 տող, 30 տողահա-  
մարն ունի ընդամէնը 1 տող, 25-րդ տո-  
ղահամարի միայն առաջին տողն է իրե-  
նը, միւս 4-ը վերաբերում է հինգ զգա-  
յարաններին եւ յօդերին: Այսինքն՝ այն,  
ինչ պէտք է ասուէր հինգ զգայարաննե-  
րի մասին, փոխանցուել է ձեռքերի մատ-  
ներին, եւ այն, ինչ վերաբերում է մանր  
ու մեծ յօդերի նկարագրութեանը, դար-  
ձեալ վերագրուել է ձեռքերի մատներին:  
Սա, անշուշտ, Նարեկի նորակայ վերծա-  
նողի համար իսկական գիւտ է եղել, եւ  
նա սկսել է մեկնաբանել. «... բանա-  
ստեղծն ասում է, որ մատներից «ոմանք  
ստուարք են եւ զարաւորք, եւ այլք փոքունք են  
եւ պիտանիք ...» (էջ 74):

Նա գլխի էլ չի ընկել, որ Նարեկա-  
ցին այս ամէնը ոչ թէ մատներին է վե-  
րագրել, այլ ասել է մարդու 360 յօդերի  
եւ 5 զգայարանների մասին: Բայց Հ.Մ.-  
ը յամառ է իր «յայտնագործութեամբ»  
եւ շարունակում է. «Գաղտնիք չէ, որ  
մարդուս ցուցամատը, միջնամատը եւ  
մատնեմատը «ստուարք են եւ զարաւորք»,  
իսկ բութը եւ ճկոյթը «փոքունք են եւ պի-  
տանիք»: Իսկ հարկ կա՞յ ասելու, որ այդ  
ամէնը միասին կազմում են 10: Ուստի  
մեր ունեցած թուերին պէտք է աւելաց-  
նել եւս 10: Յաջորդ տողով՝ «Կէսք՝ կարծ-  
րակերտք եւ ազդողականք», թէեւ շեշտում  
է եղունգներ ունենալու պարագան, բայց  
ամբողջ տողի յօրինման նպատակը

«Կէսք» բառի գործածութիւնն է, որ նշա-  
նակում է 10-ի կէս, այսինքն՝ 5» (էջ 74):

Նորից եմ կրկնում, որ այդ ամէնը  
բուն բնագրում 360 յօդերից եւ 5 զգա-  
յարաններից կազմուած մարմնի մասերին  
է վերաբերում, որոնց թուի կէսը երբէք 5  
չի լինի: Սակայն սա եւս էական չէ  
«վերծանողի» համար: Ահա թէ ինչու նա  
շարունակում է գրել. «Այնուհետև 36-րդ  
տողում ասում է. «Են եւ գողտրականք եւ  
պատուականագոյնք»: Ճիշտ է «գողտրա-  
կանք» են թէ՛ ճկոյթ եւ թէ՛ բութ մատ-  
ները, բայց կասկածից վեր է, որ դրան-  
ցից «պատուականագոյնք» են բութ մատ-  
ները, ուրեմն կունենանք եւս 2»: Այնու-  
հետեւ, ի մի բերելով այս անմտութիւնը,  
նա սկսում է հաշուել՝  
360+5+10+10+5+2+2=394, յետոյ սրան  
գումարում է հայկական տոմարի 551-ը  
եւ ստանում է 945, իսկ սա համարում է  
Նարեկացու ծննդեան թուականը: Եւ  
ո՞րն է զաւեշտականը. իր կատարած այս  
հնարովի եւ անճիշտ հաշուարկը վերա-  
գրում է Նարեկացուն (էջ 74) եւ իր յօ-  
դուածի 75-րդ էջում գրում. «Ահա հայ  
բանաստեղծական մեծագոյն հանճարի  
ծննդեան ինքնամատոյց ստուգագոյն  
թուականը, որը, իր իսկ բառերով ասած,  
այսուհետեւ պէտք է մնայ «անխալ եւ ա-  
նայլայլելի»:

Այնուհետև ձեռքերի մատները բա-  
ցում է ու փակում, խնդրում է, որ այդ  
անի նաեւ զարմացած ընթերցողը, այնու-  
հետեւ, չգիտենք ինչու, 9 մատը հաշուում  
է 900, 4 մատը՝ 40, յետոյ դրանց գումար-  
ում է 5 եւ «ստանում է» 945: Եւ այս ա-  
մէնը համարում է վերծանում՝ Նարեկացու  
ծննդեան ինքնամատոյց եւ ստուգագոյն թուա-  
կան: Թէկուզեւ միայն այս տարօրինակ վերծա-  
նումը ցոյց է տալիս, որ Հ.Մ.-ի վերծանման մե-  
թոդը եւ տեխնիկան արատաւոր են, հակագի-  
տական եւ Նարեկացուն ու նրա գլուխգործո-

ցին՝ անյարիր:

8) Փաստ ութերորդի հերքումը

Սա եւս սերտորէն առնչում է նա-  
խորդ՝ ԽԶ (46) գլխի Ա դրուագին, որ-  
տեղ, ինչպէս տեսանք, վերծանման փո-  
խարէն աւերածութիւն է կատարուած,  
իսկ այստեղ ոչ միայն խորացուած են  
սխալները, այլեւ նոյնիսկ վիրաւորանք է  
հասցուած դարեր շարունակ սրբացուած  
Գրիգոր Նարեկացուն եւ ոչ միայն Նա-  
րեկացուն...

Մատեանի ԽԶ գլխի Գ դրուագում  
Նարեկացին լայն առումով՝ Եկեղեցու,  
այն է՝ Հոգեւոր կեանքի ներդաշնակու-  
թիւնը ցոյց տալու համար դարձեալ դի-  
մել է Ա դրուագում իր նկարագրած  
մարդկային աստուածատուր կառոյցի հա-  
մաչափութեանը: Նա գրել է.

Դարձեալ այլ արիմակ հոգեւորական,  
Որ զսիրոյն յաւորուած շաղկապէ ի մի առ  
եկեղեցի,

Քեւ խորհրդածի (էջ 424):

Այստեղ խորհրդածել նշանակում է  
մմանուել, համեմատուել (տե՛ս ՆՀԲ, Ա, էջ  
277. Առձեռն, էջ 391):

Այդպէս էլ թարգմանուել է՝ որոշ  
տարբերութեամբ.

Կայ եւ հոգեւոր մի այլ օրինակ...

Որի խորհուրդը դարձեալ քեզնով է մեկ-  
նաբանում

(Մ. Խերանեան, էջ 193):

Ահա հոգեւոր մի այլ օրինակ,

Որ նոյնպէս քեզնով է մեկնաբանում

(Վ. Գեւորգեան, էջ 266):

Այնինչ Հ. Միլրդոյեանը սխալմամբ  
գրել է, որ Նարեկացին, «քաջ գիտակցե-  
լով իր ասելիքի կարեւորութիւնն ու  
դժուարըմբռնելիութիւնը», ընթերցողին  
խորհուրդ է տալիս «գրուածի մասին

մտորել սեփական օրինակով» (էջ 75): Մինչդեռ բնագրում այդպիսի բան չկայ, քանի որ խորհրդածել այստեղ չի նշանակում մտորել: Այնուհետև նա յանիրաւի յայտարարում է, որ «փաստօրէն, բանաստեղծը սկզբնապէս մեծ դժուարութեամբ է դարձել կուսակրօն, որովհետեւ...» (մեղա՛, մեղա՛ – Գ. Մ.) «դա համարում է մարդու սեռական անդամատուրթիւն՝ գտնելով, որ դրանից աղաւաղում է մարդու բնական կառուցուածքի աստուածադիր պատկերը» (էջ 75): Մինչդեռ Նարեկացին, ինչպէս ասացինք, սուրբ Եկեղեցու, Հետեւաբար Հոգեւոր կեանքի ներդաշնակութիւնը համեմատում է մարդու կազմուածքի համաչափութեան հետ եւ գրում, որ եթէ մարմնի որեւէ անդամ, թէկուզ աննշան, չնչին, կտրուի, պակասի յանկարծ, կ'աղճատուի ամբողջ կազմուածքը, եւ նրա բուն կերպարը կ'ենթարկուի անարգ փոփոխութեան: Հ.Մ.-ը չի հասկացել այս ամէնը եւ սխալ է բացատրել նաեւ յաջորդ տողերը. իբրեւ թէ ըստ Նարեկացու՝ իր ասած անդամահատութիւնից «կշտամբւում է» մարդու աստուածակերպ պատկերը («եղական պատկեր Աստուծոյ»), «իսկ ոգին դառնում է գերի»: Այսինքն՝ Նարեկացին խօսում է սրբութիւնից, աստուածային ներդաշնակութիւնից, իսկ ծածկագրեր «վերծանողը»՝ գոհակարանութիւնից:

Ահա այս տարօրինակ բացատրութիւնից յետոյ նա յայտարարում է, որ Նարեկացին այդտեղ յայտնում է նաեւ իր կուսակրօն դառնալու թուականը հետեւեալ երկտողում եղած Ադին բառով.

Եւ արդ, ընդէ՞ր կորուսեր զփառսն երկնատրս,  
 Իբր Գախաստեղծն երբեմն՝ զվիճակն  
 երկրաւոր յԱդին, դարաստանի:

Այստեղ Հ.Մ.-ը բնագրում Ադին եւ դարաստան բառերի միջեւ սխալմամբ ստորակէտ է աւելացրել՝ չիմանալով, որ յԱդին դարաստանի բառերը նոյն իմաստն են արտայայտում՝ դրախտ: ՅԱդին դարաստանի անուանական յարադրութիւնն է, ի (յ) նախդիրը վերաբերում է դարաստանի եզակի տրականին՝ նրան հաղորդելով ներգոյականի իմաստ, իսկ Հ.Մ.-ը ի (յ) նախդիրը վերագրել է Ադին բառին: Գեւորգեանը ճիշտ է հասկացել՝ գրելով Եդեմ-Դրախտում (էջ 246): Հետեւաբար անտրամաբանական է, որ Նարեկացին ծածկագրէր նոյն բարդութեան միայն առաջին բաղադրիչը: Ըստ գրաբարի բառարանների (տե՛ս ՆՀԲ, Ա էջ 4, 604)՝ դարաստան նշանակում է ծառաստան, որպէս դրախտ:

Եւ ահա Հ.Մ.-ը Ադին բառը վերածում է թուերի՝  $1+4+20+400=425+551=976$ , որն իբրեւ թէ Նարեկացու կուսակրօն ձեռնադրուելու թուականն է<sup>12</sup>:

ՆՀԲ-ն նշում է, որ Նարեկացին յԱդին դրախտի դարաստանի գործածել է նաեւ «Պատմութիւն... եւ Ճառ խաչին...» գրուածքներում (ՆՀԲ, Ա, 604, Հմմտ. էջ 16): Երեւի այնտե՞ղ էլ է ծածկագրուած Ադին բառը:

Անշուշտ, այս ամէնը հնարովի է, այստեղ ոչ մի ծածկագրութիւն չկայ. սրանք բանասիրութեան, բնագրագիտութեան եւ գրաբարամասցութեան բարդագոյն ոլորտները յանիրաւի թափանցած փիլիսոփայի թիւր երեւակայութեան արդիւնք են:

9) Փաստ ինքնաբերորդի հերքումը

Ըստ յօդուածագրի՝ այստեղ եւս Նարեկացին ծածկագրել է իր ծննդեան թուականը: Նա իր հաշուարկները յենել է ԿԳ (63) գլխի տողերի քանակի վրայ, ինչը ոչ մի գիտական քննութեան ենթա-

կայ չէ եւ բառացիօրէն անիմաստ է: Ըստ նրա՝ այս գլուխը կազմուած է 118 տողերից, որոնցից 46-ն ունի որ սկսուածք (ըստ ենթագլուխների՝ Ա-16, Բ-12, Գ-14, Դ-4), Գ ենթագլուխն ունի 30 տող եւ այլն: Ասենք, որ ըստ Գ. Խաչատուրեանի կազմած բնագրի՝ ԿԳ (63) գլուխն ունի ոչ թէ 118, այլ 125 տող, իսկ նրա Գ ենթագլուխն ունի ոչ թէ 30, այլ 15 տող: Հետեւաբար տողահամարով հաշուարկները, ինչպէս վերեւում ենք ասել, ճիշտ չեն, եւ ուստի դրա վրայ կանգ առնել պարզապէս պէտք չէ, սակայն փորձենք մի փոքր խորանալ:

Նարեկացին, Բան ԿԳ (63) Գ դրուագում փառաբանելով Աստուծուն, ասել է նաեւ.

Քո է զարութիւն եւ կարողութիւն,  
 Որ շրջանակես զժամանակս ամաց հոլովման ատորց  
 Յայլ Գնանութիւն բարեպատեմ տեսողութեան<sup>13</sup> (էջ 498):

Այստեղ պարզ ու որոշակի ասուած է, որ Աստուած այնքան զօրեղ ու կարող է, որ օրերի հոլովումներով փոփոխում է տարուայ եղանակները՝ «ըստ ժամանակի իւրաքանչիւրին տալով վայելչանքն իր բարեպատեհ» (տե՛ս Վ. Գեւորգեանի թարգմանութիւնը):

Այո, ի թիւս բազում փառաբանութիւնների, այստեղ եւս Նարեկացին կատարել է հաւատացեալին բնորոշ մի վերագրում: Բայց ոչ, իսկոյն սկսում է «վերծանումը», քանի որ Հ.Մ.-ը գտնում է, որ այստեղ եւս բանաստեղծը ծածկագրել է իր ծննդեան թուականը: Ինչպէ՞ս: Նա յղում է կատարում այն տեղը, որտեղ 360 յօդերի եւ 5 զգայարանների մասին է գրուած, որը վերծանելու տեղ քարուքանդ էր արել Հէնց ինքը յօդուածագիրը: Ըստ նրա՝ եթէ տարուայ օրերի եւ ե-

ղանակների մասին է գրուած, ուրեմն 365 օրեր + 4 եղանակներ + 12 ամիսներ + որ սկսուածքով 13 տողերի թիւը, կը ստացուի  $394+551=945$ : Սա եւս Նարեկացու ծննդեան թուականն է: Մի՛ զարմացէք, այս էլ քանի անգամ Նարեկացին «ծածկագրել է» իր ծննդեան թիւը, եւ դեռ որքա՛ն էլ կայ ծածկագրուած...:

10) Փաստ տասներորդի հերքումը

Այս վերծանման հիմքը գտնուում է փաստ հինգերորդում, որտեղ հասանէ հասկ, հասակիս բառերը վանկատելով եւ հա, սա, վանկերը տարանջատելով՝ տարօրինակ վերծանում է արել՝  $Հ=70+ա=1=71-14=-57$ : Իսկ այստեղ՝ ՀԲ (72) գլխում, ծածկագրուած է համարել ահա մակբայը, որտեղ հա վանկի սկզբում, ըստ «վերծանողի», աւելացել է ա, այսինքն՝ ա+հ+ա, այն է՝  $1+70+1=72-14=58$ : Սա էլ իբրեւ թէ ՀԲ (72) գլուխը գրելիս Նարեկացու տարիքն է, իսկ տարեթուի մասին էլ ասում է. «Դա կարող ենք համարել 1002 թ. վերջին կամ 1003 թ. առաջին օրերը» (էջ 78): Իսկ ինչո՞ւ է Նարեկացին յատկապէս ծածկագրել ահա բառը: Բացատրութիւնը, անշուշտ, անտրամաբանական է: Նա գտնում է, որ ամբողջ Մատեանում միայն այստեղ է ահա բառը կրկնուել չորս տողերի սկզբում, իսկ դա, ըստ նրա, յուշում է, որ այն ծածկագրուած է. դարձեալ տողերի անբնական հաշուարկ, դարձեալ յարմարեցրած թիւ:

Ահա մակբայը Մատեանում գործածուել է 179 անգամ, այստեղ ոչ թէ չորս, այլ Հինգ անգամ կրկնուել է, որը սովորական է Նարեկացու լեզուի եւ ոճի հարմար, եւ այն ծածկագրուած համարել ա+հա կամ տողասկզբներին կրկնուելու պատճառով՝ պարզապէս սարքովի է: Այդ դէպքում մի՞թէ ահա բառը ծածկագրուած է նաեւ 526-րդ էջում, որտեղ

գրուած է:

1-ին տող՝

Ահա դու կեանք, դու փրկութիւն, դու բժշկութիւն,

2-րդ տող՝

Դու անմահութիւն, դու երանութիւն, դու լուսաւորութիւն:

Այստեղ ահա բառը չի կրկնուել առերեւոյթ. այն վերաբերում է ոչ միայն երկու տողերի, այլևս վեց նախադասութիւնների՝

Ահա դու կեանք (ես), ահա դու փրկութիւն (ես) եւ այլն:

Մի՞թէ տիեզերական խորութեան հոգէաշխարհ ունեցող Հանճարեղ եւ Համեստագոյն բանաստեղծն այսպիսի շինծու ծածկագրմամբ այս էլ քանի անգամ կը նշէր իր տարիքը:

11-12) Փաստ տասնմէկերորդի եւ տասներկուերորդի հերքումը

Տասնմէկերորդ «վերծանումը» հետեւանք է յօդուածագրի մի անտեղեկութեան<sup>14</sup>: Նա չգիտէ, որ Հին Կտակարանում Դադան կամ Դաթան անունը բացի թուեր գրքից (Թիւ. ԺՁ 1, 12, 25, 25, 27), յիշատակուած է նաեւ Սաղմոսների գրքում<sup>15</sup> (Սաղմ. ձԵ 17), որը եւ ուղղակիորէն նկատի է ունեցել Նարեկացին: Թուեր գրքում հինգ անգամ գրուած է Դաթան, որը եւ ճշգրտորէն ներկայացուած է Հին Կտակարանի 1999 թ. հրատարակութիւնում: Իսկ Սաղմոսների գրքում (ձԵ 17) գրուած է Դադան: Յօդուածագիրը, չիմանալով, որ Նարեկացին օգտուել է Սաղմոսների գրքից, կարծում է, թէ այս անուան Դ-թ տառադարձման հակասութիւն կայ Աստուածաշնչի 1999 թ. երեւանեան հրատարակութեան եւ Նարեկացու գրածի միջեւ (տե՛ս էջ 80, ծնթ.): Հ.Մ.-ը գրում է, որ ինքը պահպանում է «Մատեանի գրութիւնը, որովհետեւ ներկայ դէպքում դա խիստ կարեւոր է»: Եւ այնքան է «խիստ կարեւոր», որ Նարեկացին անգամ «ուղղում է» մտքը Աստուածաշնչում՝ թ տառը դարձնելով Դ, քանի որ ըստ Հ.Մ.-ի՝ նա Դադան անունամբ ծածկագրել է իր հօր մահուան թուականը: Այս անգամ եւս սխալուած է «վերծանողը»:

Սաղմոսների գրքում (ձԵ 17) գրուած է. «Բացաւ երկիր եւ եկուլ գԴադան եւ ծածկեաց զբանական զԱբրիովնի»:

Նարեկացին, նկարագրելով իր, այն է՝ իր քնարական հերոսի ծանր հոգեվիճակը, գրել է.

Ձի եթէ ի ձեղուն բարձրութեան երկնի՝

Անտի անձրեւեաց հուրն Սողոմայ, որպէս ասացեալ է,

Իսկ եթէ յատակ երկրի խորութեան՝

Սա երաց գկոկորդն ըմբոնողական

Եւ եկուլ գԴադան բանական Աբրիովնի (Բան ԿԸ, դր. Դ):

Ինչպէս նկատուել է, Նարեկացին գրեթէ բառացի վերցրել է Սաղմոսից ընդգծուած տողը, մինչդեռ Հ.Մ.-ը դիտաւորութիւն է տեսնում այս ամէնում՝ կարծելով, թէ ծածկագրուած է Դադան անունը:

Ո՞վ է Դադանը: Հին Կտակարանում (Թիւ. ԺՁ 1, 12, 25, 25, 27) գրուած է, որ Կորիւր, Աբրիովնը եւ Դաթանը հակադրուած են Մովսէս մարգարէին, վերջինս չի կարողանում համոզել նրանց, որ հաշտուեն, եւ դիմում է Աստծուն, նրա հրամանով բացուած է գետինը, եւ նրանք, իրենց ընտանիքներն ու անասուններն անցնում են գետին տակ: Ահա այդ դէպքն է ակնարկել Նարեկացին՝ յիշատակելով Դադանի անունը: Սակայն

Հ.Մ.-ը մի շինծու ողբերգական պատմութիւն է սարքել, իբրեւ թէ 16-ամեայ երկկողմանի ծնողազուրկ Նարեկացին մեծ ողբերգութիւն է ապրել իր հօր բանադրուելու եւ բանադրուած մահանալու պատճառով, ահա թէ ինչու ծածկագրել է յատկապէս նրա մահուան թուականը:

Ժամանակի կաթողիկոս Անանիա Ա Մոկացու եւ Նարեկացու հօր՝ Խոսրով Անձեւացու հակադրութեան մասին հանգամանորէն գրել է Մ. Օրմանեանն իր «Ազգապատում» արժէքաւոր աշխատութեան 1-ին հատորում<sup>16</sup>: Նա գտնում է, որ նրանց միջեւ կրօնադաւանաբանական բնոյթի վէճ չի եղել, ահա թէ ինչու նրանց յարաբերութիւնները ի վերջոյ հարթուած են, եւ Անանիան ներում է նրան (Ազգապատում, էջ 1282): «Գովութեամբ եւ յարգանք յիշուած անձնաւորութիւն մըն է Խոսրով» (նոյն, էջ 1279): Վերջում գրել է. «Իսկ Խոսրովի մահը դրուած է 972-ին (Չամ. Բ, 839), հարկաւ իր եպիսկոպոսական աթոռին վրայ, որովհետեւ իրեն դէմ որեւէ վճիռ մը արձակուած չէ» (նոյն, էջ 1335): Այնպէս որ նման ողբերգութեան հիմք չունէր Նարեկացին, որպէսզի իր հօր մահը համեմատէր Աստուածաշնչում բացասաբար ներկայացուած Դադանի մահուան հետ:

Ըստ Հ.Մ.-ի, ուրեմն, ի՞նչ է արել Նարեկացին: ԶԴադան անուան հայցականից հեռացրել է գ նախդիրը, այնուհետեւ հաշուարկել է՝  $n=4+w=1+n=4+w=1+n=400=410+551=961$ : Եւ այսպէս «յայտնաբերուած է» Խոսրով Անձեւացու մահուան թուականը: Հ.Մ.-ը գրում է. «Կարող է սա ոմանց թուալ պատահական զուգադիպութիւն, բայց նախ՝ եթէ Նարեկացին յատուկ նպատակով չի ընտրել Դադան անունը, ապա նա պէտք է որ յիշատակէր ոչ թէ Դադանի, այլ Կորիսի անունը, որովհետեւ վերջինս էր ապստամբութեան կազմա-

կերպիչն ու ղեկավարը, եւ բնաւ պատահական չէ, որ Հին Կտակարանում այդ միջադէպը վերագրուած է «Կորիսի, Դաթանի եւ Աբրիովնի ապստամբութիւն» ձեռքով»: Ըստ նրա՝ կայ նաեւ մէկ այլ կարեւոր փաստարկ. «Վերջապէս դիտելի է, որ Դադան անունն օգտագործուած է հայցական հոլովով, այսինքն՝ ուղիղ ձեռով, իսկ Աբրիովն անունը՝ սեռական հոլովով» (էջ 81): «Կարեւոր» դիտուած այս «փաստարկները» յօդս են ցնդում, երբ Նարեկացու գրածը համեմատու էք Սաղմոսաց գրքի վերջ Աշուած հատուածի հետ, որը, ինչպէս ասացինք, բառացի նոյնն է, ինչ Նարեկացու գրածը:

Այս ամէնը ցոյց է տալիս սոյն «վերծանութեան» սնանկ լինելը:

Ըստ Հ.Մ.-ի՝ Նարեկացին այնքան յուզուած էր «բարձունքից դահավիժած հօր» մահուան համար, որ որոշում է քանիցս ծածկագրել եւ նրա ծննդեան թուականը: Դրա համար Նարեկում պիտի իրար մօտ գտնել վեց հատ կ տառ:  $4=60$ , հետեւաբար՝  $6 \times 60 = 360 + 551 = 991$ : Լրջօրէն յայտարարում է «վերծանողը», որ սա էլ նրա ծննդեան թուականն է:

- Ահա այդ տողերը:
  - ա) Կրկին կորացի կարկանդակ կամաւ:
  - Ինչպէս նաեւ՝
  - բ) Կորակոր գացիւքն, արջնաթոյր գունովն,
  - Կրկնապարոյր, կուծագ կոցաւն
- (էջ 82):

Ճիշտն ասած, ինքս էլ Մատեանի մէկ այլ էջի երկու տողում վեց հատ կ եմ գտել եւ չգիտեմ՝ ծածկագրուած է, թէ՞ ոչ: Այդ տողերն են՝

- Ի յերկուս հետս երկմտութեան կրկին կարացի՝
- Կասեալ ի բարեաց (Բան ԿԴ (64) դր. Բ):

\* \* \*

Կայ նաեւ մէկ այլ անճշտութիւն: Հ.Մ.-ի սոյն յօդուածի 72 էջի տողատակի ծանօթագրութիւնում նշուած է, որ ՂԳ գլուխն ունի 41, ՂԴ-ն՝ 52 տող, գումարը՝ 93 տող: «Դրանով, գրուած է այնտեղ,՝ Նարեկացին փաստել է, որ Մատեանն սկզբնապէս ունեցել է 93 գլուխ»: Այսպիսի տողատուումը, ինչպէս քանիցս ասել ենք, պայմանական է: Օրինակ՝ Գ. Խաչատուրեանի կազմած բնագրի այդ երկու գլուխներն ունեն 81 տող:

Երկու անգամ գրուած Ամէն բառը չպէտք է հաշուել 93-ի հետ, քանի որ այդ աւարտաբառը մի-մի տող չի կազմում եւ ռիթմի մէջ չի մտնում: Մեր կարծիքով՝ Նարեկն ունի 93 գլուխ, իսկ թէ ինչո՞ւ, բացատրութիւնը տրուած է «Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկում մի նոր վերծանում» մեր յօդուածում (Գրական թերթ, 2003, թիւ 7, էջ 9):

13) Փաստ տասններեքորդի հերքումը

Այստեղ «վերծանում է» 92 (88) գլխի վերջին մասը: Նա գրում է. «Մատեանի գրութեան ժամանակի մասին Նարեկացին հետաքրքիր տեղեկութիւն է յայտնում նաեւ 92 գլխի վերջնամասում» (էջ 83): Եւ մէջբերում է հետեւեալ տողերը.

Եւ թագաւորեացն կեանքդ շնորհաց ողորմութեան քոյ, Բրիստոս,  
Ի գանձս պահեստի ոսկերացն ցամաքելոց,  
Որով ի ժամանակս կեանքս անկալանս  
Սկզբնատր լուսոյ մտի գարնայնոյն՝  
Նորոգման աւուրն պայծառութեան՝  
Քոյովդ ցաւողով յոգի աճեցեալ  
Այսու փրկութեամբ անմահականս

Եւ անցամաքելի վերամբարձութեամբ  
Օտաւաիդ ձգեալ իմանալեացն բարեաց՝  
Դարձեալ դալարացայց եւ կրկին ծաղկեցայց,

Ըստ քոյինաշունչ Գրոյն յուսարութեան (էջ 600):

Գիտահամեմատական բնագիր կազմողներն իրաւացիօրէն ծանօթագրել են (էջ 1108, ծնթ. 2), որ այստեղ «ակնարկուում է... Վերջին կամ Ահեղ դատաստանը (հմմտ. Ես. ԻԶ 19, Եզեկ. Լէ, Յոբ. ԺԴ 7-12)»:

Բանաստեղծը, դիմելով Յիսուսին, աղերսում է վերջին դատաստանի օրը փրկել իրեն, այսինքն՝ ամբողջ մարդկութեանը, որպէսզի ինքը զարնանային պայծառ օրերի նորոգութեամբ դարձեալ դալարի եւ ծաղկի՝ «ըստ քոյինաշունչ Գրոյն յուսարութեան»: Հետեւաբար այստեղ Նարեկացին իր Մատեանի գրութեան ժամանակի մասին ոչ մի տեղեկութիւն չի հաղորդել, ինչպէս կարծում է Հ. Միրզոյեանը: Սակայն «վերծանողի» մտքում այլ թիւ ու հաշուարկ են նստած, եւ նա գրում է. «Եթէ հաշուի առնենք, որ այս տողերը բանաստեղծը գրել է 1003 թ. յուլիսին, ապա կարող ենք վստահութեամբ ասել, որ բուն Մատեանից... մնացել է ընդամենը 5 գլուխ՝ ընդհանուր ծաւալով 376 տող, որը կարող էր աւարտել ճիշտ այն ժամանակ, երբ սկսել էր՝ երեք տարի առաջ» (էջ 83): Եւ որպէս ինքնափրկօղակ աւելացնում է. «Հնարաւոր է՝ ընթերցողներից շատերին թուայ, թէ ներկայ դէպքում ես արհեստականօրէն փաստերը յարմարեցնում եմ իրար, բայց դա պարզապէս թւում է...» (էջ 83):

Այնուամենայնիւ, ընթերցողն իրեն իրաւունք է վերապահում հարցնելու, թէ նա Ահեղ դատաստանի օրուայ նկարագրի մէջ ի՞նչ հետաքրքիր տեղեկութիւն

է յայտնաբերել Մատեանի գրութեան ժամանակի մասին, այդ որտեղի՞ց իմացաւ, որ վերը նշուած տողերը Նարեկացին գրել է 1003 թ. յուլիսին: Արդեօ՞ք «վերծանողը» Նարեկի գրութեան աւարտի մասին գրելիս՝ Մատեանը «կարող է աւարտել ճիշտ այն ժամանակ, երբ սկսել էր՝ երեք տարի առաջ», նկատի չունի հնձի ժամանակ գրել սկսելու իր «վերծանումը», իսկ այժմ էլ պնդում է Մատեանն աւարտելու նոյն հնձի ժամանակը՝ չըմբռնելով մէջբերուածի գրաբար բնագիրը: Եւ այսպէս, սխալներն աստիճանաբար կուտակուում են եւ փոխկապակցուում:

Իր յօդուածի վերջում «վերծանողը» յայտարարել է. «Կարծում եմ՝ ասուածը բաւական է՝ համոզուելու, որ Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» գլուխգործոց ստեղծագործութիւնը լի է բացայայտման կարօտ ինքնակենսագրական գաղտնիքներով», որոնցից առայժմ վերծանել է «մի կաթիլ»:

Այնպէս որ առաջիկայում սպասուում են միրզոյեանական նորանոր «վերծանումներ...»:

Նրա «վերծանումների» հիմնական սխալներից են՝

1) «Վերծանողը» անհիմն կերպով կարծում է, որ Մատեանում կան բազմաթիւ ծածկագրութիւններ, եւ ինքը յայտնագործել է դրանք վերծանելու գաղտնիքներն ու միջոցները: Նա չի ընդունում եղած ճշգրիտ բացատրութիւնները, որոշ հատուածների վերծանումները եւ դրանք ժխտող, բնագրից չբխող «վերծանումներ» է առաջարկում:

2) Նա կարծում է, թէ «Մատեան ողբերգութեան» երկի բնագրի նոր հրատարակութիւնը (Երեւան, 1985) գիտաքննական է, մինչդեռ բանիմաց եւ ջանադիր

աշխատասիրողներն այն իրաւացիօրէն համարել են գիտահամեմատական: Ըստ «վերծանողի» եթէ այն ակադեմիական է եւ գիտաքննական, ուրեմն այնպիսին է, ինչպիսին գրել է Նարեկացին, ճշտաբար հիմք պիտի ընդունել անգամ տողատուը:

Յայտնի է, որ 10-րդ դարում եւս արձակ թէ չափածոյ գործերը գրուել են առանց բառանշատման, չափածոյ ստեղծագործութիւնները չեն տողատուել, մինչդեռ Հ.Մ.-ը, յենուելով մեր օրերի պայմանական տողատուների՝ իր տողահաշուարկների վրայ, անհիմն վերծանումներ է արել:

3) Որեւէ բառ, վանկ, տառ ծածկագրուած համարելով՝ նա բնագրագիտական, քերականական, իմաստաբանական վերլուծութիւններ չի կատարել, չի գտել գիտական հիմնաւորումներ, այլ լուկ ենթադրութեամբ «ծածկագրութիւններ» է «վերծանել» եւ «յայտնագործել» ենթադրելին իրական համարած թուականներ, փաստեր: Նա հնարել է իրականութեանը չհամապատասխանող ինչ-որ պատմութիւններ եւ դրանցից ելնելով՝ «վերծանումներ» կատարել:

4) Նրա գրածից երեւում է, որ մտացածին են Նարեկացու երկի բնագրին, բնագրի այս կամ այն տողին, բառակապակցութեանն ու բառին տրուող բացատրութիւնները: Այս դէպքում նրան խանգարել է գրաբարի թոյլ իմացութիւնը:

5) Նա իր յօդուածը վերնագրել է «Վերծանութեան փորձ», սակայն բուն շարադրանքը ոչ թէ ինչ-որ չափով թէական է, այլ ներկայացուում է որպէս «վերջին ճշմարտութիւն»:

6) Նա ուղղակիօրէն գրել է. «Մատեանում ամէն ինչ այնպէս է հաշուուած, որ պատահականու-

թեան մասին խօսք լինել չի կարող, իհարկէ, չհաշուած գրչազրական սխալներն ու վրիպակները» (էջ 77):

Եւ այս ամէնից այնպիսի տպաւորութիւն է ստացուում, որ Նարեկացին ոչ թէ հրաբխի նման ժայթքել է իր մտքերն ու զգացումները, այլ նախապէս նստել, հաշուարկներ է արել, եւ արդիւնքում ստացուել է ոչ թէ «Մատեան ողբերգութեան» հանրահռչակ երկը, այլ սովորական մի հաշուեմատեան: Այնինչ «Մատեան ողբերգութեան» երկը, որպէս չափածոյ ստեղծագործութիւն՝ իր ընդարձակ ծաւալով, հարուստ բառապաշարով, լեզուաոճական բազմազանութեամբ, ընդգրկուելով բովանդակութեամբ, առինքնող արուեստով, ինքնատիպ եւ եզակի ստեղծագործութիւն է ամբողջ հայ հին եւ միջնադարեան գրականութեան մէջ: Այն մարդկային հոգու անխարդախ հայելի է, որտեղ արտացոլուած են խորախորհուրդ մտքեր եւ յաւերժական գաղափարներ, բազմահարուստ յոյզեր ու զգացումներ, որոնք ոչ միայն ազգային գուճաւորում ունեն, այլեւ համամարդկային են: Այդ իսկ պատճառով անթոյլատրելի է մտացածին, էժանագին մօտեցմամբ ձգտել խորաթափանց ուսումնասիրողի կերպար ստեղծել եւ աղաւաղել կատարելութիւնը<sup>17</sup>:

Ամէն մի սերունդ պատասխանատու է ներկայ ժամանակների եւ գալիքի առջեւ:

Ահա թէ ինչու է ծնուել վերը նշուած «վերծանումների» մասին մեր այս քննութիւնը:

Մեր ազգային յաւերժական մեծութիւններին պէտք է մօտենանք ակնածանքով եւ խոնարհութեամբ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Յակոբ արքեպս. Նալեան, *Գիրք մեկնութեան Աղօթից Սրբոյն Գրիգորի Նարեկացոյ*, Կ. Պոլիս, 1745:
- 2 Գաբրիել վրդ. Աւետիքեան, *Նարեկ Աղօթից, եւ զգոշատր լուծմամբք բացայայտեալ*, Վեներտիկ, 1801:
- 3 Գրիգոր Նարեկացի, *Մատեան ողբերգութեան*, աշխ. Պ. Մ. Խաչատրեանի եւ Ա. Ա. Ղազիմեանի, Եր., 1985, 1122 էջ:
- 4 Գրիգոր Նարեկացի, *Մատեան ողբերգութեան*, Եր., 1985, էջ 302: Մատեանի գրաբար մէջբերումներն այստեղից են:  
Նարեկ՝ Մատեան ողբերգութեան ս. Գրիգոր Նարեկացիի. գրաբար բնագրի հանդիպարութեամբ աշխարհաբարի վերածեց Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնի, Պուլնոս Այրէս, 1948 (այսուհետեւ՝ Գ. Խաչատրեան – Գ. Մ.):  
Գրիգոր Նարեկացի, *Մատեան ողբերգութեան*, թրգմ. Վ. Գետրոգեանի, Եր., 1979:  
Բ. Նահապետեան, Ա. Արքաբարեան, *Մաթեմատիկայ, 5-րդ դասարանի դասագիրք*, Երեւան, 2000, էջ 20:  
Տե՛ս Ռ. Ղազարեան, *Գրաբարի բառարան*, հտ. Բ, Երեւան, 2000, էջ 505:  
Նարեկ՝ աղօթամատեան ս. Գրիգոր Նարեկացոյ, Երուսաղէմ, 1966 (Զ տպագրութիւն), արդի հայերէնի վերածեց Թորգոմ եպս. (արեւմտահայերէն արձակ թարգմանութիւն, I տպ. Կահիրէ, 1926), այսուհետեւ՝ Թ. Գուշակեան – Գ. Մ.):  
Գրիգոր Նարեկացի, *Մատեան ողբերգութեան*, գրաբարից թարգմանեց Մկրտիչ Խերանեան, Եր., 1960:  
Բնագրում (էջ 404) վրիպակ է՝ աշխարհ:  
Ստացում է, որ Նարեկացին մեծ դժուարութեամբ կուսակրօն է դարձել 31 տարեկանում (ըստ Հ. Մ.-ի՝ ծնուել է 945 թ., ձեռնադրուել է 976 թ. (976–945=31) եւ միմչ այդ «համոզում է եղել», որ կուսակրօնութիւնը հաւասարագօր է..., եւ դրանից ոգին դառնում է գերի: Անշուշտ, այս ստալոյթ բնութագրմանը պէտք է տրուի որոշակի գնահատական:  
Այս տողերը Գ. Խաչատրեանի կազմած բնագրում եւ թարգմանութիւնում ոչ թէ Գ, այլ Բ դրուագի կազմում են (էջ 161), այդպէս է նաեւ Թ. Գուշակեանի (էջ 286), Մ. Խերանեանի (էջ 273) եւ Վ. Գետրոգեանի (էջ 382) թարգմանութիւններում, որը եւ ժխտում է տողահամարների հաշուարկման այս արատաւոր մեթոդը:  
Տե՛ս նաեւ նրա «Նարեկի մի ծածկագրութեան վերծանութեան փորձ» յօդուածը («Գրական թերթ», 2003, թիւ 9, էջ 4):  
Աստուածաշնչի այս երկու հատուածների եւ

Գրիգոր Նարեկացու գրածի (Բան ԿԸ դր. Դ) աննշութիւնների մասին տե՛ս Թ. Քալանթարեան, *Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի եւ սաղմոսների աննշութիւնները*, Ա. Էջմիածին, 1997, էջ 57-58:  
Մաղաքիա արքեպս. Օրմանեան, *Ազգասպաւորում*, հտ. Ա, Ս. Էջմիածին, 2001:

Յիշելի է դեռեւս 1745 թ. «Մատեան ողբերգութեան» երկի մեկնութիւն գրած Յակոբ պատրիարք Նալեանի համաւարտէն ասած խօսքը. «Աղամանդէ պալատին խեցիլ դուր շինեցի»:  
Այո՛, անհնարին է թեթեւ ձեռքով փորձել քարուքանդ անել այդ աղամանդեայ պալատը: